

ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՀՆԱԴԱՐԵԱՅ ԲԱՂՆԻՔԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Վերջին տարիներին Հայաստանի վաղեմի մայրաքաղաք Արտաշատում պեղումներով բացայայտուեց հասարակական բաղնիքի համալիր: Նորայայտ բաղնիքի համալիրը գտնվում է պատմական Արտաշատ մայրաքաղաքի արեւմտեան կողմի թաղամասում, նրա կրօնահասարակական կենտրոնի հրապարակին կից Արաքս գետից մօտ 70մ հեռավորության վրայ: Այն կցուած է նրա արեւմտեան կողմում գտնուող սրբազան հրապարակի հիւսիսարեւելեան անկիւնային մասին (ընդհանուր մակերեսը 447քմ): Բաղնիքի համալիրը ըստ շինարարական տեխնիկայի եւ հնագիտական նիւթերի թուադրւում է մ.թ. Բ. – Գ. դարերով (նկար 1):




Նկար 1. Բաղնիքի ընդհանուր տեսարանը

Տարածքում կատարուած հնագիտական պեղումները եւ ուսումնասիրութիւնները զգալի նիւթեր տուեցին այդ հետաքրքրական լողարանային շինութիւնների վերաբերեալ:

Բաղնիքում պահպանուած է հռոմէական փոքր բաղնիքներին բնորոշ յատկագծային սկզբունքային լուծումը, ինչպէս նաեւ ծառայատարածական յօրինուածքը:

Բաղնիքի շէնքի կողմնորոշումը երկրի կողմերի նկատմամբ ճշգրիտ արեւմուտք-արեւելք է, որ համապատասխանում է հնամեայ բաղնիքների դիրքորոշման կանոններին (ըստ Վիտրուվիոսի)¹, իսկ գլխաւոր ճակատը ուղղուած է դէպի հարաւ (նկար 2):



Նկար 2. Բաղնիքի յատակագիծը եւ կառուցման փուլերը

Բաղնիքի համալիրի կառուցումը, ըստ մեր ուսումնասիրութեան հիման վրայ կատարած եզրակացութեան իրականացուել է, երկու շինարարական փուլերով, ինչը ընթերցւում է

1 VITRUVIUS, *The ten books on Architecture*, Moscow 1936, book V, 106-107 (in Russian).

պատերի կարանների ոչ միաձուլ լինելով: Նախնական կառույցը բաղկացած է մի առանցքի վրայ տեղադրուած իրար յաջորդող տարրեր նպատակ ունեցող չորս սենեակներից (նախասրահ, սառը ջրով, գուլ ջրով եւ տաք ջրով լողասենեակներ) (նկար 3):



Նկար 3. Բաղնիքի առաջին փուլի հարաւային մասի սենեակների դասաւորութիւնը

Լողասենեակների իրար կողք նոյն ուղղութեամբ (արեւելք-արեւմուտք) դասաւորուած են յաջորդական ձեւով: Ամենամեծը առաջին սենեակն է 35,31մ² չափով, որ հանդիսանում է բաղնիքի նախասրահը (նկար 4): Այն ունի երեք մուտք՝ կապուած դրսի հետ եւ ներքուստ զարդարուած է որմնախորշերով: Արեւելեան ներքին դռնով մտնում են իրար յաջորդող երեք լողասենեակները, որոնցից առաջինը սառը ջրի լողարանն է (Ֆրիգիդարիում), (նկար 5) երկրորդը գուլ ջրին (տեպիդարիում) եւ տաք ջրի լողարանը (կալդարիում) (նկար 6): Որոնցից առաջին եւ վերջինը ունեն լողաւազաններ: Տաքութիւնը պահպանելու նպատակով այդ լողասենեակների միջանկեալ դռները դասաւորուած են տարրեր առանցքներով: Այս բաղնիքի յատակագծային լուծումը յիշեցնում է, մասնագիտական գրականութեան մէջ յայտնի «հռոմէական փոքր բաղնիքներ» տիպը, որի օրինակը Հայաստանում գտնոււմ է Գառնիի ամրոցում²: Նոյնատիպ յատա-

2 ՍԱՀԻՆԵԱՆ Ա., Գառնիի անտիկ կառույցների նարտարատեստութիւնը, Երևան 1983, 52-63:

կազմային յօրինուածքով փոքր բաղնիքների շինութիւնները բնորոշ են ամբողջ հնադարեան աշխարհին: Դրանք կառուցուած են ինչպէս Հռոմում³, նոյնպէս եւ Անտիոքում⁴, Վրաստանում⁵ եւ այլուր:



Նկար 4. Բաղնիքի նախասրահը



Նկար 5. Բաղնիքի սառը ջրի լողարանը



Նկար 6. Բաղնիքի գոլ եւ տափ ջրի լողարանները



Նկար 7. Բաղնիքի մեծ դահլիճը

Քիչ ժամանականց շինարարական երկրորդ փուլի ընթացքում բաղնիքի շէնքը հիւսիսային կողմից ընդարձակուել է: Կցուել են եւս վեց սենեակներ. Շոքերաղնիքը, մեծ դահլիճը

3 KUNZE, E. - SCHLEIF, H., *Die Badeanlage am Kladeos, in Bericht uder die Ausgrabungen in Olympia, 1940-1941*, Berlin 1944, 54-55; CHARITONIDES, L. - GINOUVES, R., *Bain romain de Zevgolatios, in Bulletin de Correspondance hellénique*, v. LXXIX, Paris 1955.

4 *Antioch-on-the-Orontes, I, The Excavations of 1932*, ELDERKIN, G. W., (ed.), Princeton, London 1934: The Hague: 10,11; fig. 5, 7.

5 ԲՈՒՈՉԱՋԷ, ՆԱՍՏԱԿԻՍԻ, ՍՍԻԿԻՆԷ, ՋԱԼԻՍԻ, *Անտիկ դարաշրջանի Իրերիայի Բաղնիքներ, ի Համառոտ հաղորդումներ*, Մոսկուա 1977, N 151, 97 (ռուսերէն):

(նկար 7) (հանդստասենեակ), անկիւնային քառորդշրջանաձեւ, ըստ երեւոյթին, լողաւազանը (նկար 8), ինչպէս եւ հանդերձարանը, միջանցքը, կաթսայատունը (նկար 9): Կաթսայատունը միաժամանակ տաքացրել է դահլիճը, շոգերադնիքը, տաք ջրով լողասենեակը (Caldarium) եւ գոլ ջրով լողասենեակը (Tepidarium): Սառը ջրով լողասենեակը (Frigidarium) եւ լողաւազանը տաքացուել են առանձին՝ զրոյից կցուած կրակարաններով:



Նկար 8. Բաղնիքի լողաւազանը

Շինութեան առաջին յարկաբաժինը իրականացուած է կիսամշակ փոքր տեղական քարէ շարուածքով՝ կրաքետոնի շաղախի լիցքով, իսկ պատերի վերին յարկաբաժնի մասերը իրականացուած են խառը շարուածքով՝ կազմուած սպիտակ կրաքարի խորանարդերից (մեծաւ մասամբ երկրորդական օգտագործման), թրծած աղիւսից եւ անմշակ ճեղքուած տեղական քարերից (նկար 10):



Նկար 9. Բաղնիքի կաքսայատունը



Նկար 10. Բաղնիքի պատի շարուածքը

Բաղնիքի նախասրահի պատի մէջ հանդիպում են նաեւ մշակուած տուֆէ քարեր: Իբրեւ կապակցող նիւթ օգտագործուած է կրաքետոնը (կիր, աւազ, թրծած աղիւսի ջարդօն): Թրծած աղիւսները, ինչպէս եւ տուֆը ունեն ջերմութիւնը կլանող եւ երկարատեւ պահող յատկութիւն: Պատերի լայնութիւնը 1մ է:




Նկար 11. Բաղնիքի նկուղային հիպոկաուսային համակարգը

Բաղնիքի լողասենեակների տաքացումը իրականացւում էր հիպոկաուստային համակարգով: Կաթսայատնից տաք օդը եւ ծուխը նախ եւ առաջ տարածւում էր սենեակների յատակների տակ թողնուած մօտ մէկ մետր բարձրութեամբ միասնական նրկուղային կիսայարկով՝ տաքացնելով յատակները, այնուհետեւ յատուկ կառուցուած բացուածքներով անցնում էր պատերի եւ առաստաղի միջով՝ տաքացնելով նաեւ դրանք: Ծուխը հեռանում էր թաղածեւ եւ գմբէթածեւ ծածկերի վերին մասերում թողնուած յատուկ անցքերից:

Լողասենեակների նկուղային կիսայարկի յատակը պատրաստուած էր կրաշաղախից: Նրա վրայ նշահարուած 26-36սմ միմեանցից հեռու գտնուող ուղղանկիւն ցանցի հատման կէտերի վրայ կրաշաղախի օգնութեամբ տեղադրւում էին տարբեր ձեւերի (կլոր կամ ուղղանկիւն) թրծած աղիւսներով շարուած սիւններ՝ 0,8-1,0մ բարձրութեամբ: Օգտագործւում էին նաեւ քարից տաշուած միակտոր սիւններ (Նկար 11): Սիւնների վրայ կենտրոնից

կենտրոն դրուում էին ուղղանկյուն թրծած աղիւսէ 6-8սմ հաս-
տութեամբ միակտոր թրծած սալեր, ապա դրանք ծածկւում էին
12սմ հաստութեամբ անջրաթափանց կրաշաղաղի շերտով, որի
մէջ խառնուած էին աղիւսի կամ կղմինդրի բեկորներ: Այսպէս
երկրորդ յատակի ընդհանուր հաստութիւնը կազմում էր 18-
20սմ: Սիւների աղիւսները ինչպէս եւ նրանց վրայ շարուած ա-
ղիւսի սալերը ընդունելով կաթսայատնից եկող կրակի եւ ծխի
ջերմութիւնը, երկար ժամանակ պահպանում էին այն: Տաքաց-
ման նպատակով պատերի մէջ կառուցուած բացուածքներն իրա-
կանացուել են հետեւեալ կերպ. պատերի, ներսի մակերեսները ե-
րեսապատուում էին ուղղանկյուն, թրծած սալերով (44x44x6,5սմ),
որոնք անկիւններում ունէին (5,5-6,5սմ) ելուստներ: Այսպէս
պատի եւ սալի միջեւ ստեղծւում էր դատարկ տարածութիւն:
Նոյն նպատակով օգտագործուել են նաեւ ողղանկյուն սնամէջ
խողովակներ, որոնք տեղադրուած են կալդարիումի լողաւազանի
պարագծով (նկար 12):



Նկար 12. Բաղնիքի պատերի տախտակաւ անցումները

Հողարանների տաքացնող նկարագրուած համակարգը ա-
ռաջին անգամ իրականացուել է Հռոմում⁶: Հռոմէացիները այն
համարել են առաւել նպատակայարմար եւ եւ առողջարար, քանի
որ պատերի ամբողջ մակերեսը տաքանալով տաքացնում էր
նաեւ սենեակի օդը:

Շատ հետաքրքրական են իրականացուած սենեակների
ստորին յարկաբաժինները միմեանց հետ կապող բացուածքները:

6 VITRUVIUS, *The ten books on Architecture*, V, Moscow 1936, 107 (in Russian).

Տեղում ամբողջական պահպանուել են նշուած բացուածքները, նաեւ այն, ինչը տանում է կրակարանից դէպի սենեակների ստորին յարկաբաժինը: Դրանք իրականացուած են մեծ խնամքով եւ ունէին տարրեր բարձրութիւններ (0,70-1,00մ), իսկ լայնութիւն 70սմ: Դրանք կամարակապ են եւ շարուած մեծ թրծած աղիւսներից հովհարածեւ դասաւորութեամբ՝ կրաշաղախով: Այդ նոյն սկզբունքով շարուած են խորշերի եւ դռների բացուածքների վերին մասերը:



Նկար 13. Բաղնիքի խնամկարը

Բոլոր լուսանեակների պատերը ինչպէս եւ նախամուտքը եւ հանդերձարանը պատուած են ջրակայուն երկչերտ գունաւոր սոււաղով: Այդ սենեակների պատերը ներքուստ զեղեցիկ ձեւաւորուած էին որմնախորշերով, որտեղ, ամենայն հաւանականութեամբ, տեղադրուած են եղել արձանիկներ եւ լուսաւորութեան միջոցներ, որոնց բեկորները գտնուեցին պեղումների ընթացքում: Սենեակների յատակները ծածկուած էին բազմազոյն զար-

դանախշ ունեցող խճանկարներով: Գոլ եւ տաք սենեակների յատակների խճանկարներն ունեն ավելի հարուստ եւ գունագարդ նկարուածքներ (նկար 13):

Բաղնիքի համալիրի ծածկերից ոչինչ չի պահպանուել, սակայն պեղումների ժամանակ բացայայտուած մանրամասների ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ լողասենեակների ծածկերը իրականացուած են եղել թաղային կառուցուածքով: Այդ մասին կարող են վկայել նաեւ նոյնատիպ բաղնիքներ ներկայացնող մասնագիտական գրականութեան ուսումնասիրութիւնը: Բաղնիքի սենեակների առաստաղները հին աշխարհում ընդանրապէս արւում էին թաղածածք կամ գմբէթաձեւ, այն պատճառով որ կաթիլների վերածուած գոլորշին սահի ներքեւ, թաղի կամ գմբէթի կոր մակերեսով:



Նկար 14.
Ջրամատակարարման
քրժած կաւէ
խողովակաշարը



Նկար 15. Ջրամատակարարման
խողովակաշարը և ջրահեռացման առուն

Ինչ վերաբերում է բաղնիքի շէնքի բարձրութեանը, ապա մենք հիմնուել ենք սառը ջրով լողասենեակի մուտքի դրան պահպանուած բարձրութեան չափի վրայ, որ 2,64մ է: Դրան բացուածքի վերին նիւշից մինչեւ թաղի հիմքը պայմանականօրէն ընդունելով 1,00մ բարձրութիւն կարելի է ստանալ բաղնիքի սենեակների բարձրութիւնը մօտաւոր ճշգրտութեամբ: Թաղի կա-

ռուցուածքը բնորոշ է Հին Հայաստանի շինարուեստին, որի պատմական տարածքում ունենք թաղակապ ծածկերի կառուցման բազմաթիւ օրինակներ⁷:

Շոգերաղների սենեակի յատակագծային յօրինուածքը տարբերուծ է միւս սենեակներից: Այստեղ արեւմտեան պատը կիսաշրջանաձեւ է եւ հնարաւոր է, որ արեւելեան պատի երկու անկիւններում տեղադրուած լինէին կեղծ առաջաստներ, որոնց միջոցով ստացուէր բոլորաձեւ հիմք՝ գմբէթաձեւ ծածկի կառուցման համար: Վերջինս նոյնպէս շարուած պէտք է լինէր թրծած աղիւսներից՝ կրաշաղախով, ինչպէս եւ կառուցուած է արեւմտեան պատը: Պեղումների ժամանակ շոգերաղների սենեակում յայտնարբերուեցին աղիւսի բեկորներ: Լուսաւորութեան համար գմբէթի կենտրոնում, հաւանաբար պէտք է լինէր երգիկի բացուածք: Միւս լողասենեակների լուսաւորութիւնը հնարաւոր էր ապահովել, լուսամուտներով որոնք կարող էին գտնուել թաղերը սահմանափակող եզրային արտաքին պատերի վրայ: Բաղնիքների կառուցման համար տեղանքի բնութիւթեան ժամանակ հաշուի է առնուել գետնայարթակի առանձնախտութիւնները, կապուած ջրամատակարարման ու ջրահեռացման հնարաւորութիւնների հետ: Պեղումներով յայտնարբերուել են ջրամատակարարման թրծած կաւէ խողովակաշարեր: Բաղնիքի համալիրի հարաւ-արեւելեան անկիւնային հատուածում պեղուել է շէնքը արտաքուստ չըջանցող 16մ երկարութեամբ թրծած կաւէ խողովակաշար, որով ջուրը, դատելով խողովակների միացման ձեւից, հոսել է հիւսիսից հարաւ ուղղութեամբ (նկար 14): Նաեւ բացուել են խողովակաշարերի հատուածներ տանող բաղնիքից դէպի հարաւային կողմի շինութիւնը (նկար 15): Թրծած ջրատար խողովակների չափերը տատանուծ են երկարութիւնը 0,30 մինչեւ 0,42մ, իսկ լայն տրամագիծը 0,17-0,18մ, նեղը՝ 0,14-0,15մ: Պեղումներով բացուել են նաեւ ջրահեռացման առուների տարբեր երկարութեան հատուածներ: Դրանք ունեն լայնութիւն եւ բարձրութիւն, իրականացուած են քարէ շարուածքով եւ ծածկուած քարէ սալերով: Ներքուստ առուն սուաղուած է անջրաթափանցիկ շաղախով:

7 ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ, Ա. - ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Կ. - ՍԱՀԻՆԵԱՆ, Ա., Ակնարկներ եիմ եւ միջնադարեան Հայաստանի նարտարապետութեան պատմութեան, Երեւան 1978, 98-99 (ռուսերէն):



Նկար 16. Բաղնիքի ջրբաժան հանգույցը

Բաղնիքի պեղումներով յայտնաբերուած ջրամատակարարման խողովակաշարի եւ ջրահեռացման առուների տարրեր հատուածները, դեռեւս չեն տալիս այդ համակարգերի վերաբերեալ ամբողջական պատկերացում: Պեղումներով բացայայտուել են նաեւ ջրբաժան հանգույցներ, որոնք իրականացուած են կրաքարից (նկար 16): Այդպիսի քարեր յայտնաբերուել են մի քանի հատ, որոնցից մէկը գտնուել է *in situ* գոյ ջրի լողասենեակի (տեպիդաուիի) արտաքին անկեան մօտ: Վերջինս ունի 60x50սմ չափերով հիմք եւ բարձրութիւն: Ջրբաժան բոլոր յայտնաբերուած քարերը խորանարդաձեւ են, որոնց մակերեսներին աւրուած խողովակաշարերի միացման անցքերի միջոցով ներքուստ բաժանում կամ փոփոխում են ջրատարի ուղղութիւնը: Հայաստանի տարածքում առայժմ պեղումներով հռոմէական տիպի փոքր բաղնիքներ են յայտնաբերուել Վաղարշապատում⁸, Գառնի⁹ ամրոցում (Գ. դար) եւ երեք բաղնիքներ Արտաշատ մայրաքաղա-

8 ՏԻՐԱՑՆԱՆ, Գ., Հին Վաղարշապատի Բաղնիքի անկան կառուցութիւն եւ տեղադրութեան հարցի շուրջ, ՊԲՀ, 1977, N2, 85-88 (ոուսերէն):

9 Նոյն, Հին Հայաստանի կոմունալ տեխնիկայի մի յուշարձան – Գառնի ամրոցի բաղնիքը, ՊԲՀ, 1959, N 2-3, 265-280 (ոուսերէն):

քի տարրերը թաղամասերում¹⁰։ Ուշագրավ է, որ հին Հայաստանի բաղնիքները ժառանգորդաբար իրենց շարունակութիւնն են գտել վաղ եւ զարգացած միջնադարում (Դուին¹¹, Զուարթնոց¹², Անի¹³, Անբերդ¹⁴ եւ այլն)։

ԱՄԻՆԻԱ ԿԱՆԵՑԵԱՆ

-
- 10 Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ, Բ., *Արտաշատ I*, Երեւան 1982, 25-26 (նուսերէն); ԽԱԶԱՏՐԵԱՆ, Ժ. - ԿԱՆԵՑԵԱՆ, Ա., *Արտաշատի VIII քլրի շերտագրութիւնը*, ԼՀԳ, 1974, N 9, 58-87:
- 11 ՂԱՖԱԴԱՐԵԱՆ, Կ., *Դուին բաղնիքը եւ նրա պեղումները*, Ա., ՀՍՍՀ ԳԱ հրատարակութիւն, Երեւան 1952, 136-138:
- 12 ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, Թ., *Հայկական նարտարապետութիւն*, երկրորդ ժողովածոյ, Երեւան 1948, 96-107:
- 13 ՄԱՌ, Ն., *Անի: Քաղաքի գրեպիկն պատմութիւն եւ պեղումներ բաղնիք տաքածիւմ*, Լենինգրատ 1934, 71, ցկ. XXXII, (նուսերէն): ՕՐԲԵԼԻ, Հ., *Անի բաղնիքի համառոտ ուղեցոյց*, (Անիական մատենաշար N 4), Լենինգրատ 1920, 14 (նուսերէն):
- 14 ՕՐԲԵԼԻ, Հ., *«Բաղնիքը եւ խնդկատակը, XII դար»*, Ռուստաւելու դարաշրջանի յուշարձանները, Լենինգրատ, 1938 (նուսերէն):

Summary

ARCHITECTURE OF THE NEWLY DISCOVERED ANCIENT
BATH IN THE ANCIENT CAPITAL OF ARMENIA
ARTASHAT

KANETSIA AMINIA

Archaeological studies in Armenia revealed considerable material for urban municipal services among which construction of bath facilities occupies a special place. During the last year's excavations of Artashat, a public bath was excavated. The construction equipment and archaeological materials enable us to date it to the end of the 2nd and the beginning of the 3rd cc. AD. The study showed that the bath has two construction periods, the art of building structures is characterized by the Roman baths constructions. Foundations of buildings were made of semi-finished small local stones, and the upper parts of the walls were made of white limestone and tuff blocks alternated with baked bricks; as a binding material the lime concrete was used.

The original construction structure is represented by four alternating premises located on the same axis. Elongated bath structure has a clear East - West orientation, which coincides with the orientation of Roman ancient baths, the main facade faces South. Later the bath building was expanded on the North side, five premises were attached to it, including a steam room, a large lounge, a pool, cloakroom and boiler room. The boiler room simultaneously heated the lounge, steam room and bathing rooms. It provided bathing room Caldarium with hot water, bathing room Tepidarium with warm water. The bathing room with cool water, Frigidarium, and the pool were heated separately by boiler rooms adjacent to their outer walls.

The bath heating was realized by hypocaust system. All bathing rooms, as well as a lobby and cloakroom were covered with a two-layered waterproof color plaster. The walls of some bath rooms were decorated with niches in which, apparently, there were statues, fragments of which were found during excavations.

The floors were covered with mosaic. The mosaic of floors of warm and hot bathing rooms had a richer color coloring. Ceiling construction of bath complex has not survived, however the study of details found during excavations

enable us to consider that it was vaulted like the ceiling construction of similar baths presented in scientific publications. Construction of vault is typical for the building art of ancient Armenia on the territory of which we have numerous examples of the construction of vaulted ceilings. The steam bath by its planning concept (western wall semicircular) possibly had a domed cover.

When choosing a location for the baths construction, the specificities of the terrain connected with the possibility of water supply and drainage were taken into consideration. Fragments of water supply pipeline made of baked brick and different segments of drainage covered ditches were found during the excavation.

Investigation of characteristic features of the bath construction such as planning concepts, space-planning decision, and building technique resemble those of Roman small baths. These characteristics were adopted in Armenian architecture and adapted to the local traditions.

It is noteworthy that the baths of ancient Armenia traditionally continue to exist in the Middle Ages.